Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 4/01/223-23 «03» 02. 2023 թ.

«Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Թ. Խաբելաշվիլիին

Հարգելի տիկին Խաբելաշվիլի

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ ՀՏԶՀ), «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ընթացակարգով՝ առանց ֆինանսական միջոցների, **«Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ**-ի հետ 2022 թվականի ապրիլի 25-ին կնքել է «ՀՀ Արարատի մարզի Բերդիկ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» կապալային աշխատանքների կատարման գնման թիվ **ՆՁՀԲՄ-ԱՇՁԲ-2022/5/2** պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Հետագայում, ֆինանսական միջոցների հատկացումից հետո, 2022 թվականի օգոստոսի 9-ին, **«Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ**-ին ներկայացվել է ֆինանսական միջոցների առկայության մասին համաձայնագիրը և առաջարկվել է ՀՏԶՀ-ը ներկայացնել վերջինիս հաստատված տարբերակն ու բանկային երաշխիքները: Սակայն, «Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ-ն նախատեսված ժամկետում ստորագրված համաձայնագիրը բանկային երաշխիքների հետ միասին ՀՏԶՀ-ը չի ներկայացրել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ-ն** Վրաստանի Հանրապետության ռեզիդենտ է, ՀՏԶՀ-ի կողմից կազմվել և ներկայացվել է Ընկերությանը ՀՀ-ում շինարարական գործունեությամբ զբաղվելու համար թույլտվություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սակայն, մինչ օրս ընդունված չէ:

Հաշվի առնելով վերը նկարագրվածը և հիմք ընդունելով թիվ **ՆՁՀԲՄ-ԱՇՁԲ-2022/5/2** պայմանագրի **3.1.4 (ա)** ենթակետի, **6.2, 6.3 և 8.9** կետերի դրույթները կայացվել է որոշում.

1. Համարել ծառայությունների մատուցման պետական գնման թիվ **ՆՁՀԲՄ-ԱՇՁԲ-2022/5/2** պայմանագիրը լուծված.
2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար չկատարված

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

աշխատանքների գնի 0,05% չափով, որը կազմում է **3,425,000** ՀՀ դրամ (68,500,000x100x0,0005).

3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ **68, 500,000** ՀՀ դրամի 0,5% չափով, որը կազմում է **342,500** ՀՀ դրամ:

Նշված գումարները խնդրում ենք սույն փաստաթուղթի պաշտոնական հրապարակումից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՏՀՀ-ի բանկային հաշվին՝ Արարատբանկ ԲԲԸ 1510032335590400:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, թիվ **ՆՁՀԲՄ-ԱՇՁԲ-2022/5/2** Պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏՀՀ-ն մտադիր է դիմել «JSC Bank of Georgia» որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրով նախատեսված **6,850,000** ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման տուժանքի մասին համաձայնագրով նախատեսված **20,550,000** ՀՀ դրամ գումարները ստանալու պահանջով: Տուժանքների համաձայնագրերով նախատեսված գումարների պահանջները ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում չբավարարելու դեպքում, **«Ա.Գ.Դեվելոպմենտ» ՍՊԸ**-ի տվյալները փոխանցվելու են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու համար:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն 03/02/2023

Ա. Սողոմոնյան

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Կատարող՝ Ա. Իսախանյան
Հեռ. (010) 24 71 23/106